ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. ապրիլի 4 - ին Արաբական Միացյալ Էմիրություններ՝ Աբու Դաբի գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Հակոբ Վարդանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Արաբական Միացյալ Էմիրություններ՝ Աբու Դաբի,ապրիլի 4 - 5

4. **Հրավիրող կողմը:**

Էմիրաթական «Մասդար» ընկերության ղեկավարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

«Մասդար» ընկերության ղեկավարության հետ նախատեսվող հանդիպմանը մասնակցելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները**

Հանդիպման ժամանակ Մասդար ընկերության կողմից ներկայացվեց Այգ-1 ծրագիրը, պարզաբանումներ և հիմնավորումներ Կառավարության Կետանցի Դեպքի Գնման Գնի (174 մլն ԱՄՆ դոլար) փոփոխության նպատակահարմարության վերաբերյալ:
Հայկական կողմից նշվեց, որ Կառավարության Կետանցի Դեպքի Գնման Գնի փոփոխությունը, որը պետության համար ենթադրում է լրացուցիչ ֆինանսական

պարտավորություններ, ընդունելի չէ: Փոխարենը գործընկերներին առաջարկվեց երաշխավորված գնման ժամկետը երկարաձգել ևս 5 տարով՝ Համաձայնագրում նշված 20 տարվա փոխարեն, ինչը չընդունվեց:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>

Հանդիպում է տեղի ունեցել «Մասդար» ընկերության գործադիր տնօրեն Մոհամեդ Ջամիլ Ալ Ռամահիի հետ:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>

Հանդիպման ավարտին կողմերը հանգեցին այն որոշմանը, որ անհրաժեշտ է Այգ-1 ծրագրի ֆինանսավորման ամփոփման ժամկետը երկարաձգել՝ որպես վերջնաժամկետ սահմանելով 2025թ.-ի ավարտը:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

Հայկական կողմը կապահովի իրավական բնույթի անհրաժեշտ փոփոխություններ՝ այդ թվում Ֆինանսավորման ամփոփման ժամկետի երկարաձգման, Ծրագրի տարածքը «Մասդար Հայաստան 1» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով փոխանցելու փոխարեն կառուցապատման իրավունքով տրամադրելու մասով, կուսումնասիրի Կայանի կառուցումը տեղական շինարարական կազմակերպությունների կողմից իրականացնելու հնարավորությունը՝ քննարկելով նաև Մասդար ընկերության հետ, իսկ վերջինս կտրամադրի Կայանի կառուցման նախագծային փաթեթը:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

09.04.2024